

3569

1897



460

8082

XVI

911549-93
2-15

Հ. ԱՐՄԵՆ ՂԱԶԻԿԵԱՆ

ՆՈՒԷՐ ՄԱՆԿԱՆՑ

ԱՌԱՋԻՆ ՓՈՒՆՁ

Ա Ճ Կ Ա Ր Հ Ա Բ Ա Ր Ս Ա Ն Ա Խ Ո Ր Ն Ե Ր

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Մ Տ Ա Յ Յ Ո Ր Մ Ա Ր



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Վ Ա Խ Ա Մ Ր Բ Ո Յ Ն Ղ Ա Զ Ա Ր Ո Ւ

1897

891.995

2-17

5386

6082

ՆՈՒԷՐ ՄԱՆԿԱՆՑ

ԱՌԱՋԻՆ ՓՈՒՆՉ

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Բ Ա Ր Ս Տ Ա Ն Ա Կ Ո Ր Ն Ե Ր

Մ Ա Ն Կ Ո Վ Ա Ն Մ Տ Ա Յ Յ Ա Ր Մ Ա Ր

2004

891.995
n-17

Հ. ԱՐՄԵՆ ՂԱԶԻԿԵԱՆ

~~891.5492-93~~

~~215~~ 3

ՆՈՒԷՐ ՄԱՆԿԱՆՑ

ԱՐԱՋԻՆ ՓՈՒԽՆՁ



ՎԵՆԵՏԻԿ

ବୁଦ୍ଧିମତ୍ତା କାହାରେ

1897

Յորդորուելով ազգային մասնավարժական նոչիրական
գործոյն զբաղող մտերիմ անձի մը , տարւոյս մէջ ի
Բազմավիսի տպագրութիւն սկսած ուստահառները փոշէց
մի կազմելով կը նոչիրենք հայ մասնաւոյն : **Փոշէց**
բաղուած և բան մեծի մասին եւրոպական համբաւա-
չոր հեղինակաց գործերէ , բոլորովին ազատ բարգմա-
նոչեամբ՝ հայ ախորժակաց յարևարցընելու նպատա-
կաւ :

Միրալիր ընդունելուրիւն մը փոշքաշան մասնուրեան
կողմանն՝ պիտի խրախոսու զմեզ երկրորդ Փոշէց մ'ազ
հիւսելոց , առելի գոյնզգոյն և առելի անոշահոս , որով
համարինք և մեր ազնիր բարեկամին փափաքանաց և
վաստակոց գորժակից ըլլալ :

ՆՈՒԵՐ ՄԱՆԿԱՆՑ



Ն Ա Բ Ի Ն Զ Ը

Ե օթի տարուան մի տըղու
հսաւ մի ծել դասատու.
Աստուած ուր է,
Շուտ ինձ ըսէ,
Կու տամ քեզի մըրցանակ
Նարինջ մանուշ կըլորակ:
— Աստուած ուր չէ,
Դուն ինձ ըսէ,
Ես քեզ երկուք, ըսաւ, տամ,
Երկուքն ալ կըր քաղցրահամ:




ՎԱՐԴԻՆ ՓՈԽԵԼ

Ինչո՞ւ, հայրիկ,
Կ'ըսէր Խաչիկ
Վարդըն քընքուշ
Խիստ ունի փուշ:

— Ոչ վարդ միայն
Սյու ամէն բան
Երկնից տակ
Փըշուտ, որդեակ:

Երկինքն հոն վեր
Բուսած վարդեր
Չունին բիծ, փուշ,
Են միշտ քընքուշ:




ԹԻԹԵՌՆԻԿ ԵՒ ՄԵՂՈՒ

Եթէ աղէկ օդ ընէ
Մի փոփոխամիտ կ'ըսէր թեթեռնիկ,
Աղէկ եթէ օդ ընէ,
Կ'երթամ զուարճանալ ի մէջ դաշտերուն:
— Ես, ըստու անոր իմաստուն մեղուն,
Յառաջ տանելու կ'երթամ իմ դործիկ,
Եթէ աղէկ օդ ընէ:

ԱՆՇԱՐԺՈՒԹԻՒՆ

Ինչո՞ւ համար ջուրն այս ճահճին
Ե գարշահոս,
Կ'ըսէր Մարկսս վարժապետին
Եւ է աղտոտ:

— Որովհետեւ քնոյ մէջ է միշտ.
Եղիր արթուն,
Որ չի նմանիս անշարժ ճահճիդ
Մեռած ջրերուն:



ՄԱՆՈՒՇԱԿ

Անտառին մէջ մանուշակ
Զըդեր էր հոս մանուշակ .
« Մայրիկ , ըստ մի մանկիկ
Կ'երթամ գանել զայն ծաղիկ » :

Երկար վնասեց բայց ի զուր ,
Ո՞ւր ծաղիկ , կար միայն բոյր :
« Պարկեցառւթիւնն ըստ մայրն
Է ամընկատ և խոնարհ :

Եղիր դու ալ , ով որդեակ ,
Մի պարկեցափիկ մանուշակ ,
Վարքիդ անուշ բոյրն ըզքեղ
Մասնէ համեստ ծաղկիդ պէս » :



ՄԱՅՐԵԿ ՈՐԴԵԱԿ

Որդիկ
Ըսէ ինձի , սիրելի մայր ,
Երբ ես չէի ծընած ով կար :
Մայրն
Թէ ես կայի՝ կառկած չի կայ ,
Վասըն զի ես ըզքեղ ծընայ :
Որդիկ
Քեզմէ առաջ ով կար մայրիկ :

Մայրեն

Իմին մայրիկ, իմին հայրիկ:

Որդին

Իսկ անոնցմէ առաջ ովկ կար:

Մայրեն

Կար մօրըս մայր և հօրըս հայր.

Եւ այսպէս միշտ ելնելով վեր

Վեր վեր հեռուն

Որդին

Բայց մինչև երբ:

Մայրեն

Մինչև հասնինք այն կէտ ուր մէկ

Միայն մարդ կար յաշխարհի:

Որդին

Մէկ.

Ի՞նչպէս.

Մայրեն

Այն

Որդին

Անկէ առաջ:

Մայրեն

Կար մեծ մայրապէս անկէ առաջ

Որ չունի մէկն իրմէ առաջ:

Որդին

Եւ այդ մէկն ի՞նչ անուն ունի:

Մայրեն

Որդեակ, այդ մէկն Աստուած կոչուի:



ՄԱՆԿԻԿ ԵՒ ԾԱՂԿՈՒՆՔ

Որ ձեռք ըզձեղ շուշան, վարդ
Գլծեց և ձեղ տըւաւ գոյն,
Կ'ըսէր մանկիկ մի զըւարթ:

— Այն որ դըրաւ սանձ ծովուն:
Բայց կը խամրինք մենք իսկոյն
Թեթև շընչով մարեսն:

Գու ևս անուշ կը բուրես
Մեղ պէս մանուկ գեղեցիկ,
Այլ պիտ' խամրիս մեղի պէս:

Իսկ որ զծաղկունս և ըզբնաւ
Գլծեց՝ նա չէ վաղանցիկ,
Այն գեղ խամրել չունի բնաւ:



Դ Օ Դ Օ Շ * Ե Ւ Կ Ա Յ Ծ Ո Ո Ւ Կ


Կանաչ խոտին վըրայ նըստեր
Մի կայծոռիկ կը փալփրւէր.
Այնչափ համեստ՝ որ չէր զիտեր
Թէ իւր չորս կողմ լոյս էր ծագեր:

Ծակէն դօդօշ մ'ելաւ աղտոտ
Բոլորովին կանաչ կեղտոտ,
Եւ իւր լորձունքը գարշահոտ
Թըքաւ նորա վըրայ՝ նախանձոտ:

« Ո՞՛, Տէր Աստուած, ի՞նչ եմ ըրեր
Քեզ որ այսափ ես բարկացեր »,
Կ'ըսէր որդիկն այն շըւարեր:
— Ինչու չորս կողմ լոյս ես սըփոեր:

* թումաւոր, կամաչ զորտ:

❀❀❀



Օ Զ Բ.

Օձ մը գընաց գանգատելու սատանին
« Ի՞նչ ահեղ ես, ըստւ անոր սատանայ »:
— Զեռքէս եկած չարը կ'ընեմ, տէր արքայ:
— Ուրեմն ի՞նչ բան քեզ պակսի, չես երջանիկ:
— Ո՛չ, կը բժըշկէն իմ խածուածներ,
կը տաղեն իմ բացած վէրքեր,
Եւ զեղթափներ կ'ոչընչացնեն իմ գառնութիւն:
Ինչու չունիմ, ո՞չ, անդարման՝ մահացու թոյն:
— Ի՞նչ տեսակ օձ կ'ուզես ըլլալ:
— Զըրպարտութիւն:

ԸՆԿԱՆ ԵՒ ԵՐԵՒԱՆ

Վըրան ելենով Եղուարդ աթոսին՝
Կ'ըսէք. «Հայրիկ, տես
Ուշափ մեծ եմ ես:
Ըստ հայրն ելեն՝ երբ իջաւ գետին.
«Կ'երեւայիր մեծ,
Այն, բայց փոքր ես.
Պէտք է ըլլալ
Ոչ երեւալ:
Ապագային մէջ նայէ չի մոռնաս;
Մի գեղեց մեծըներ, մեծցիր թէ կըսնաս»:

Ա Ե՛ Կ Ա Ր Դ Ա Ր Լ Ր Ա Գ Ի Ր Դ

Հայր, մի կարդար լըրագիրդ, հետըս խաղա :
— Ոչ, ժամանակ չունիմ : — Ո՛չ, հայր կ'աղաքեմ,
Հետք խաղալ շատ կը սիրեմ :
— Հետըս եկուր լըրագիր կարգա :
— Ո՛չ, չեմ կըբնար, կը ձանձրանամ :
— Կը տեսնեմ արդ, փաքրիկ Ոտուբէն,
Որ մենք ունինք մեր խաղեր, դուք ձերիններ,
կըբնայ զբաղիլ մարդ ինքնիրեն,
Բայց պէտք չէ բնաւ երբէք նեղել զուրիշը :



ՄԱՅՐ ԵՒ ՄԱՆԿԻԿ


Նայէ մայրէկ, գեղեցիկ վարդն
ի՞նչ է ելեր.
Կարմրուկ թերթեր
Դեղներ թռումեր
Գետին թափեր :

Կայէ մայրէիկ, Տեղմակ շուշանն
ի՞նչ է եղեր.
Արծաթ թերթեր
Գոյնը նետեր
Գետին թափեր :

— Գիւցիլ որդեակ, կաըմիլ ճերմակ
վարդ և շուշան
Ամէն գարնան
Նոյն և նըման
Կենդանանան :

Բայց քու կենաց շուշան և վարդ
ձերմակ կարմիր
Ա՛լ չեն ծըլիք.
Ունիս որդեակ
Գարուն միակ:





ԿՈՒԿՈՒ

Կու կու, կու կու.

Խնչո՞ւ չեն հաւանիր կուկուին երդին.
Հայրիկ, ես զայն շատ անուշ կը զըտնեմ.
Զեմ գիտեր ինչո՞ւ է մեղադրանքնին:
— Որդեակ, ահա քեզ պատճառը կ'ըսեմ.
Անո՞ր համար իւր երդն է ձանձրալի,
Որովհետև միշտ իր վրայ կը խօսի:



ՎՐԱԴԻ ԿԸ ՄՏԱԾԵՒ

Ճեշտ, հայրիկ, վըրադ կը մըտածէի:
— իրա՞ւ:

— Այս, հայր:
— Տեսնենք, Սըրբուհի,
Մըտածածդ ի՞նչ էր: — Կը մըտածէի
Թէ ինձ խամաճիկ՝ մը պիտի բերես:
— Շատ լաւ, խաբուած չես,
Ահաւասիկ քեզ:
Բայց ոչ թէ վըրաս կը մըտածէիր
Այլ դու քու վըրայ.
Զուրիշը մտածով պէտք է ինքն իր
Անձը մոռանայ:

ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿ

Ի՞նչ ձայն է այն՝ զոր կը լըսեմ, մայր, յաճախ
Սըրտիս խորէն, որ ինձ կ'ազդէ նաև վախ:
Կը մըրմըռայ ցած երբ խելօք չեմ կենար.
Ինձ ցաւ կու տայ, երեսս ընէ կարմիր վառ
Երբ մէկը զիս չի տեսներ,
Երբոր դուն հոն չես և ոչ իսկ քու ըստուեր.
Բայց երբ խելօք եմ, այն ձայն զիս խրախուսէ*
Եւ կ'ըսէ ցած. Այս աղէկ է:
— Այդ ձայն, որդեակ, է պահապան հրեշտակիդ:

* Պահումապատամք. պէտէք:

* Սիրտ կու տայ, կը քաջալերէ:



ԱՄԷՆ ԲԱՆ ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՍՏԵղծէ

Աստուած ի՞նչպէս նըկարեր է ծաղիկներ .
Ուսկից գըտեր է զոյներ :
— Սերկ տեսնելով գետիներ
Ժըպաեր է նա և ծաղկըներն են բուսեր :
— Բայց ամէն բան նոյն մեծ Աստուածն է ստեղծեր :
— Ալէն, որդեակ, ինչ որ ծանօթ կան բաներ,
Հոլ, ջուր, օդ, հուր իրեն ձեռքէն են ելեր :
— Եւ ըզքեղ ալ ի՞նքն է ստեղծեր, մայր :

Այսու սկզբան կը զարմանաս և կ'ապշիս :

— Ո՞հ, պիտ' եղած ըլլայ իրեն շատ զըժուար
Ստեղծեր քեզի պէս մի բարի անուշ մայր :

ՈՐԿՐԱՍՈԼ

Ա

Կ Տ Ա Պ Ը *

Երեք որդւոց մեջ կը բաժնէր մի պապ
Սէկ անուշ կըտապ :
« Կ'ուղե՞ս դու Գրիգոր »:
— Այս, պապ, մի քեզ :
— Իսկ դու Մըկըբաիչ :
— Այս, ես քիչ մը շատ կ'ուղեմ մեծ պապ :
Վաղելով ի շտապ **
Փոքրին Հըրանս . « Ինձ, պապիկ, շատ, խիստ շատ »:

Քիչ, շատ և խիստ շատ, մասերն երեք հատ
Առին ուղաղներ :

Հըրանտ նոր կերեր էր

Ըսկըսաւ պոռալ . « Փոքրս կը ցաւի »:
Եւ ամբողջ այն օր անցուց մաղձուած ***,
Կ'ըսէին ցածէն թէ.... լուցտուկ **** ունի :



* Քէթէ ;

** ԱՅէլէյովի :

*** Տիուր :

**** Սամճը :

F

ԱՊՈՒՐԾ

Ապուրի ատեն՝ իւր թերութիւնն էր՝
Հըրանտ միշտ հազար բիւր գտնվատ կ'ընէր։
Կամ պաղ էր կամ տաք,
Կամ լի էր իր պնակ։
Կամ թէ իր կըրծկալն աղէկ կըրուած չէր,
Ոտքը կամ կոկորդ կամ գլուխը ցաւէր։
Շատ բարձր էր կամ ցած ցէր,
Աթոռին վըրայ կամ լաւ չէր նըստած,
Կամ թէ վերջապէս ապուրն աղէկ չէր,
Կամ անօթի չէր։
Սայդ է որ Հըրանտ չէր սիրեր ապուր։
« Թէ կ'ուղես մեծնալ, ըսաւ գայեակն * իւր,
Պէտք է որ սիրես ինչ որ քեզ տըրուի»։
— Շատ լաւ, խօսք կու տամ, և տեսնես
պիտի
Բայց ալ մի տար ինձ ինչ որ չեմ սիրեր։



* Աղախիմ, տատա:

G

ՍԵՂԱՆԻ ՎՐԱՅ ԲԱՆ ԶՈՒԶՈՒԻՐ

« Մայրիկ ինծի ալ քիչ մը մըսիկ տուր »։
— Գիտես թէ ով որ բան կ'ուզէ չառնուր։
— Բան պիտի չուզեմ ուրեմն ասկից վերջ։
— Ի՞նչ խոթեր ես ձեռքդ աղամանին * մէջ։
— Քիչ մ'աղ պիտ'առնում։
— Ի՞նչ բանի համար։
— Այն մըսին համար՝ զոր տաս պիտի մայր։

G

ՄԱՌԱՆԸ

Ուրիշ օր մ'ալ — էր աշնան գրեթէ վերջն
Հըրանտ գիպուածով մինակ էր տան մէջ։
« Լաւ կոչունք *** մ'ըսաւ պիտի նեմ այսօր »։
Եւ իջնելով վար մատներուն վըրան
Գողի մը նըման մըտաւ ի մառան։
Ուր յարդին վըրայ փըռուած էր խընձոր։
Կերաւ մէկ, երկու, երեք վերջապէս
Եղթանք անօթի չեմ ըսաւ այլ ևս,
Մէկը ներս չեկած դուրս ելնենք շուտով,
Բայց եկուր տես որ գոցեր էր դուռն հոգ։
Չի կար բանալի ներսէն գոցուած էր,
Հըրանտ բանտին մէջ պւտիժն էր գըտեր։

* Տուզլուխ։

** Քիլէր։

*** Սեղամ, կերուխում։

« Այցը, հայր, աղախի՞ն », պոռայ կանչէ լայ,
Բայց ի զուր տան մէջ և ոչ մէկը կայ:
Ժամէ մ'աւելի մընաց բանտըւած
Մառանին մէջ որ իր բանտն էր եղած:
Կը դողար վախէն, թէ պաղ թէ տաք էր,
Կերած լսընձորէն փորը կը ցաւէր:
Մութը կը կոխէր, Հըրանտ չէր տեսներ:
Նորէն կը պոռայ, կը զարնէ դըրան,
Հուսկ * ինչպէս որ միշտ՝ ձայնին ողբական
կը հասնի մայրն իւր:
Բանայ բանտին դուռ.
« Այ գու պըզտիկ գող
Այս իւլնձորին դասն
Ըլլայ ականջիդ օղ:
Որկրամոլութիւնն պըզտիկ մարդուկներ
Կընէ գողիկներ.
Եւ դողութիւնն ալ կը տանի ի բանտ,
Հասկըցար Հըրանտ »:

Ե

Դ Ե Ղ Ա Հ Ա Տ Ե Ր Ը **

Բայց գեռ մեր Հըրանտը չէր ըլտկըւած,
Եր մի որկրամոլ անկուշտ ու կատղած:
Օր մ'ալ ի՞նչ տեսնէ,
Մայրն ըզգուշութեամբ հանելով տուփէն
Բան մի կը կըլլէ,
Եւ ետքը իւնամով կը կընէ դարան ***:

* Վերջապէս:
** չապ:

*** Տոլապ:

Մասձել ըսկըսաւ Հըրանտ ինքնիրեն.
« Տարօրինակ բան.
Ես մօրըս կերածը գիտնալ կ'ուզեմ,
Հաղիւ թէ ելնէ շուտ ներս կը մըտնեմ »:
Կ'ըսէ ու կ'երթայ դարան՝ տուփ բանայ,
Ո՛հ, մ՛հ, ի՞նչ փայլուն գընդակք արծաթեայ.
Արդեօք ի՞նչ անուշ շաքարեղէն է,
Կ'ըսէ երկու հատ շուտ մը կը կըլլէ:
Խելացի, էին գեղահատիկներ:
Դէպքը զի՞քն ուղղեց գիտցաւ որ ամէն
Տեսածները հոս չէ անուշեղէն.
Եւ այն փայլուն գեղը մաքրողական,
Մաքրեց զի՞քն ախտէն որկրամոլութեան:

Ա Կ Ն Ո Ց Ը

Մարկոսին սիրո կը նեղուէր
Վասըն զի բան չէր գիտեր
Եւ ոչ իսկ կարդալ:
Օր մ'երը մինակ էր և խընդալ չէր կըրնար
Բուտ: « Երթամ, պարապ կենամ ի՞նչ ընեմ
Կապոյտ զըրքոյկը ըըտնեմ
Ուսկից երէկ մեր մեծ մայր
Մի գեղեցիկ վէպ * կարդաց »:
Ու գըտնելով խուցը բաց
Լայն մը բացաւ շուտ
Գըրքոյկն այն կապուտ:
Բայց ի զուր բան չէր տեսներ,
Շիտակ բըռնելն իսկ չեյտէր **:
« Ո՛հ, հասկըցայ, ի՞նչու համար չեմ տեսներ
Աչքիս վըրայ զի չունիմ

* Պատմութիւն:

** Զէր գիտեր:

ՄԵԺ մօր կըրած ապակին »:
 Կը փընտոէ զայն կը դտնէ,
 Թաշկինակին ծայրով շըփէ ու մաքրէ:
 Նորէն նայի, կը դարձընէ երես մ'ալ,
 Բայց ուր պատմութիւն:
 Երյն ատեն ճիշդ ներս մըտնելով իրեն մայր
 « ՄԵԺ մայրն աչքի ցաւ ունի,
 Քու ցաւդ ալ է ծուլութիւն.
 Սորվէ կարգալ և պիտի
 Տեսնես, ըստւ, պատմութիւն
 Հաւատա՛ ինծի
 Առանց ակնոցի »:

Մ Ա Ք Ր Ո Ղ Ա Կ Ա Ն Դ Ե Ղ Ը

Հիւանդ էր մեր փոքրիկ Ագնէս:
 « Առողջանալ թէ որ կ'ուղես
 Կ'պսէր բըժիշկն
 Անպատճառ պէտք է որ առնես
 Երկու դդալիկ
 Եղ մաքրողական »:
 Ասոր նըման
 Զի կար իրեն զըզուելի բան:
 Կ'ուղեր միայն լիմոնաջուր :
 Իւր մայրը (զոր նա կը պաշտէր)
 Իրեն ի զուր
 Կ'աղաչէր:
 « Տեսնենք, որդեակ, մըտիկ ըրէ,
 Նախ ես կ'ըմպեմ ահա, նայէ »,
 — Զեմ ուղեր:
 — Քեզ պատեիս մի տամ .
 — Կու տան երկու :


— Վայ չեմ կըրնար, մայր շատ գէշ է:
 — Կ'աղաչէմ սիրո ըրէ, խըմէ,
 Եւ հիմա ես գնելու կ'երթամ.....
 — Ի՞նչ:
 — Խամաճիկ:
 — Աղումը ըլլայ,
 Երեն օժիտ * մ'ալ ունենայ:
 — Շատ լաւ, խըմէ:
 — Զեմ ուղեր, չեմ....
 — Կ'ուղես որ ես մեռնիմ ուրեմն
 Երբոր բժշկուիլ դուն չես ուղեր.
 Թըշուան զաւակ, ան, ուր զիմել:
 Եւ սկսաւ խեղճ մայրն արտասուել:
 Առնելն ու կըլլել Ագնէս մէկ ըրաւ
 Եղն առանց մէկ զըզուանքի բնաւ:
 Մայրն այն ատեն զինք գըրկելով
 Գորովանքով,
 « Կը սիրէի ըստւ ըզքեզ
 Ինձ արդ կըրկին սիրելի ես
 Անուշ Ագնէս :
 Տեսար, որդեակ, որ չէ շատ գէշ »:
 — Ո՛չ, շատ գէշ է, ըստւ Ագնէս,
 Կ'արտասուեիր մայրիկ բայց դուն:

Արցունք մի մէջ մօր աշերուն
 Կ'անուցընէ ըզդառնութիւն*:



* Ճի՞նէզ :


** Լեղիութիւն :



ՎԱՐԵԱԿ ԵՒ ԱԴՈՒԵՍ

Փոքրիկ վառեակ մանխոհեմ
Անհընազանդ մօրն իրեն
Կ'երթար հեռու հաւնոցէն.
Իր մօր վրայ չէր մըտածեր,
Բայց մայրը շատ հսկ կ'ընէր.
«Ո՞՛, կ'ըսէր նա՝ թէ աղուէս
Կամ թէ ուրիշ մ'իրեն պէս
Իմ ձագուկին հանդիպի
Պիտի մեռնի »:
Հանդիպեցաւ արդ աղուէս.
«Պարոն վառեակ, բարի լոյս,
Ո՞ր բախտ զըրկեց հսս ըզքեղ,
Ուրախ եմ զքեղ տեսնելուս:
— Օդն աղէկ էր դուրս ելայ
Մօրը կամքին հակառակ,

Որչափ կ'ուղէ կըրկըռայ
Կ'ուղէ բանտել շարունակ
Սուս վախերով տան մէջ զիս,
Սիրեմ քալել իմ զըլիսիս:
— Ապրէս, թէ ոչ այսօր ես,
Պատասխանեց մեր աղուէս,



Այսօր պիտի մընայի
Առանց քեղի անօթի.
Եւ ցատքելով բըզըքտեց
Վառեկն ու կուշա մը լափեց:

Ո՞վ որ չի հնազանդիր
Կը զըտնէ պատիժն իր:



Փ Տ Ա Ծ Խ Ա Դ Ո Ղ Ը

« Ինչո՞ւ Հըանտին հետ կ'ըսես մի խաղար »:
 — Հըանտը, որդեակ, երես ելած է,
 Կը վասեմ ըլլայ թէ զքեղ աւ աւրէ:
 — Եւ ի՞նչպէս մայրիկ, և ի՞նչո՞ւ համար,
 Խելքը չի հասնիր:

— Կը հասնի հիմա.

Եկմէր ետես, բայց քիչ մ'արտորա:
 Եւ կ'իջնէ հետ իր փոքրիկ Ռուբենին՝
 Որ կը մըրմըռար՝ դէպ իրենց այդին.
 Հասունցած կարմըռուկ անուշ ողկոյզներ:
 Փունջ փունջ որթերէն * վար էին կախուեր:
 « Ի՞նչ սիրուն երկու ողկոյզներ, մայրիկ,
 Նայէ հսու կարծես են երկու քուրիկ,
 Հաւսար մեծութեամբ իրարու կըպած,
 Բայց մին անձրեն հովէն է փըտած,
 Եւ կարծեմ թէ պէտք է քաղել իր քոյրն
 Որ ըլլայ իրեն անցնի քըրոջը թոյն.
 Որ ըսկըսեր է մըզլութիւ արդէն:
 — Ուրեմն տեսա՞ր, որդեակ իմ Ռուբեն,

ի՞նչպէս կ'աւրըւի մարդ չար ընկերէն:



* Ասմա:

Ա Դ Է Կ Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Կ'ըսէիր հըպարտ տալեան * հոտ չունի:
 Եկմէր հոտուըտամ:
 — Քիչ մը կը հոտի:
 Սեծցաւ այս վարդին քով երկայն ատեն
 Սեփականեր ** է վարդին հոտն իրեն:

Ա Ս Տ Ո Ւ Ց Ո Յ Ա Ն Ո Ւ Ն Ը

« Շուտ ըրէ՝ ներս եկուր, տըղայ,
 Մի նըստիր պալ քարին վըսայ,
 Մութը կոխեց, օդն ալ է թաց,
 Ի՞նչ կը նայիս վեր սեւեռած*** »:
 « Ինձ կ'ըսէիր, մայրիկ, շատ հեղ,
 Թէ անունն Աստուծոյ է գըրուած ամէն տեղ:
 Արդ կը նայիմ մէջ աստղերուն,
 Նայիմ կըրնամմ գըտնել գըրուած իր անուն »:
 — Հան է, որդեակ, հոն է անունն Աստուծոյ,
 Այլ աչերով պէտք է կարդալ զայն հոգոյ:



* Գեղեցիկ ծաղկով* անուոտ ծաղիկ մը,
 ** Յատկացմել, իրենթը ըմել:
 *** Աչքերը ոմմկած նայիլ:

Ա Դ Օ Թ Ք Ե Խ Ո Ղ Ո Ր Մ Ո Ւ Թ Ի Ւ Կ

Երկու ընկերք պատարագի կ'երթային,
Եւ երկուքն ալ տասնական փող* ունէին:
Ուրախ զըւարթ ձեռք ձեռքի տուած խօսէին,
Այն փողերով արգեօք ի՞նչ բան զընէին:
Աղքատ մ'եւաւ դիմացնին ճիշդ ժամին դուռն,
Երկընյուց ձեռքն, « անօթի եմ, զըթութիւն »:
« Եթէ մէկ փող ունենայի
Ըստ Սարգիս, քեզ կու տայի:
Աստուած օդնէ, մանրուք չունիմ ես այսօր:
— Ե՞ս ալ մանրուք չունիմ, ունիմ բայց խոշոր,
Ըստ Յակոբ, ահաւասիկ »,
Ու զրաւ աղքատ մարդուն ափիկ
Իւր գեղեցիկ տասը փողեր :
Եւ մըտան ինքն և իւր ընկեր
3եկեղեցին
Եւ երկուքն ալ աղօթեցին:
Աստուած լըսեց Յակոբիկն աղօթքին:
Զէ բաւական զըրքի մէջն աղօթել
Պէտք է նաև տառապեալները ** սիրել .
Եւ անսնց տալ արծաթ՝ պըղինձ երբ պակսի,
Կըցել *** ձեռներն է լաւ, բանալն՝ աւելի :



* Մէկ փողը հիմգ սամդիմ է, որ է ըսել յիսումական սամդիմ ութէիթ, որ կ'ըմէ 100 փարայ:
** Աղքատ, թշուառ:
*** Զեռները կցիլ աղօթելու համար՝ աղէկ բան է. իսկ բանալը՝ ողորմութիւն տալու համար՝ աւելի աղէկ է:

Կ Ա Ր Կ Ա Ն Դ Ա Կ Ը *

Մանուկ խելօք մի ողջայ էր .
Եւ որպէս զի խելօքնայ դեռ աւելի
Հայրն էր օր մը զինքը տարեր
Մի շատ վարպետ ծաղարարի **:
Մանուկ հազիւ մեծ կարկանդակ մ'էր առեր,
Մօտենալով պատուհանին
Նեհար գէմքով տեսաւ երկու մանչուկներ
Որ արխրութեամբ ներս նայէին:
« Ի՞նչ երջանիկ է, կ'ըսէր մեծն, ա՛լ, ի՞նչ կեանք,
Կարկանդակներ... ո՞հ, կը վազէ բերնիս ջըեր .
Շատ անդամ իմ անօթութեան ժամանակ
Կըտոր մը հաց ալ չեմ զըտներ :
Եւ կարկանդակն ի՞նչ է բընաւ չեմ գիտեր :
Կ'երեկի լաւ է, տես թէ ի՞նչպէս լափեն
Եւ կըտորիկ մ'ալ չեն ձըգեր :
Գու կը սիրեն կարկանդակ:
— Ե՞ս, ո՞հ, կարծեմ թէ կը սիրեմ,
Գեռ աւելի սերով *** եփածն .
Բայց մըտքով է որ կը դատեմ,
Անկից բընաւ չունիմ կերած :
Բայց մի անդամ փողոցին մէջ
Հանդէսէ մը վերջ,
Օր մը.... ո՞չ... էր իրիկուն մի
Գիշ մնաց անկէ պիտ' ուտէի »:


Այս խելմերուն այսպէս խօսիլ լըսելով
Եթէ զըթած սիրտ և զըթած ձեռք ունիք

* Պօղաչա :
*** Գայցմաք :

Սանուկին տեղ արդաք դուք ի՞նչ կ'ընէիք:
 Սըտիկ ըրաւ նա տխուր գէմքով,
 Եւ կարկանդակ ձեռքն ելլելով խանութէն,
 Ըսաւ իրենց յաւզուած սըրտով ու ձայնով:
 « Առէք, ձեզի կու տամ, արդաք,
 Կէսը մէկիդ, կէսը միւսիդ,
 Կերէք տաք տաք »:


Դ Օ Դ Օ Շ Ը

« Եկուր, Պետրոս, շուտ եկուր տես,
 Տըգեղ դօդօշ մ'ածուխի պէս.
 Կըսէք Պօղսս Պետրոսիկին,
 Եկուր սպաննենք սա գարշելին »:
 Պօղսս առաւ մի գաւազան, եղբայրը քար,
 Եւ վաղեցին տանջել դօդօշն անդըթաբար:
 Նոյն ատեն սայլ մը քաշելով էշ մ'ետեւէն
 Մազ մի մընաց պիտի կոխէք դորտին վրգէն,
 Կանգ առաւ
 Ենդեցաւ,
 Որ ըըսպաննէ իւեղճ կենդանին:
 Պօղսսն ըսաւ Պետրոսիկին՝
 Որ արդէն էր ձըգած իր քար.
 « Ո՞չ, ի՞նչ կ'ընենք, մենք, սկ եղբայր,
 Էշ մեղմէ նըւաղ է չար »:



Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ե Խ Շ Ե Բ Ա Մ


« Թիթեռնիկին քիւր երանի
 Որ օդին մէջ ազատ թըռչի :
 Կ'ըսէք զըպըոցէն ձանձրացած մի տղայ,
 Պըրել, կարդալ միշտ՝ հանգիստ վերջ չի կայ:
 Այս է իմին բախտ, բանտարկեալ թըշուառ »:
 Եւ առ շերամն՝ իւր ուղղելով բարբառ
 Ըսաւ. « Ի՞նչպէս դու քեզ բանտ կը հիւսես:
 — Խնդութեամբ, միջատն ըսաւ, կը հիւսեմ
 Վասըն զի անկէց թիթեռնիկ կ'ելեմ »:



ՈՒՍՈՒՑԻԿ ԶՈՒԱԶԵԴՐԸ

Օր մը ճաշէն վերջ՝ մէջ մի մեծ պնակի
Բերին ահազին խոշոր ձուազեղ մի:
Ուրախութենէն կը ցատքէր Մանուկ.
« Գուներնիս պիտի փախցնէ այս թըմբուկ » , **
Կըսէր ու կարծես կը լափէր աչօք:
Իր սովորական բաժնէն աւելի
Մեծ կըսոր մ'առաւ ուրախութեամբ լի:
Բայց չէր տակաւին դըգալը խոթեր,
Եւ ոչ իսկ անոր դեռ համն էր առեր,
Մէջ մ'ալ ինչ տեսնէ՝ ձուազեղն ահազին
Կը սկըսի քաշուել մէջ իր պիշնակին.
Կ'իյնայ, կը տափկի ու կը պըզտիկնայ:
Եւ ահա Մանուկը կը բարկանայ,
Կը նետէ իրեն դըգալը մէկդի,
Եւ ձըւազեղին ծուռ ծուռ կը նայի:
Ըստ մամի իրեն. « Ի՞նչ ունիս, Մանուկ,
Քեզի տըրուածէն դո՞հ չե՞ս, իմ ձագուկ » :
Մանուկ տըրութեամբ աըւաւ պատասխան.
« Զըւազեղն ինքինքը կ'ուտէ միայն » :

— Որդեակ, երևոյթն *** է միշտ խաբութիկ****
Պուռ չէիր տեսեր ձուազեղն ուռուցիկ:
Միշտ կ'ըսէն. Մեծ է, երբ բան մ'ուռած է,
Ուռեցն երբ անցնի կը տեսնես օդ է » :



* Հաւկիթի մերմկուցով, սերով և շաքարով եփուած ձըւազեղ:

** Տալուլ: *** Դըսէն երկցածը: **** Խաբող, խաբէական:

Հ Ա Յ Բ Մ Ե Բ Ը

« Ալօթը ըսելու ատեն չեն կենար,
Ուշադրութիւն դիր, ետեւ մի մընար.
Լսկըսինք մէկաեղ Հայր մեր երկնաւոր
Տուր մեղ:

— Տուր մեղ...

— Զայցն հանապաղօր*

Զայցն....

— Ինչո՞ւ համար կը կենաս նորէն,
Ի՞նչ կը մընմընաս ցած քըթիդ տակէն
Զոր չեմ հասկընար:
— Պատճառն ըսեմ, մայր:
Որովհետեւ խիստ չորուկ է մեր հաց,
Բարի Աստուծոյն կ'ալօթէի ցած
Որ միշտ հացին հետ քիչ մ'ալ կարագ** տար:


Ա Ն Պ Ա Տ Ե Հ Ա Մ Օ Թ Ը

Ալքատ մ'էր ձեռքն երկընցուցեր:
Փուշ մը տալու համար Յակոբ կը մօտենայ,
Բայց ճամփուն մէջ յանկարծակի կը կենայ,
Եւ կը ձըգէ փողն իր զըրպան.
« Ինչո՞ւ կեցար, ըստ իր հայրն, ինչո՞ւ սըխալ
Առ կարօտեալն ըրիր քայլ,
Եւ պահեցիր քու ըստակ » :
— Հայրիկ, ինձի կը նայէին՝ ամըցցայ:
— Անսիրտ անգութ երկնալէ չամըցցալ,
Կը քեալդ մարդուն քովէն գնալով անըզգայ,

* Ամէթ օրուամ: ** Թէրէ եալը:

Եւ չըտալով ողորմութիւնն՝ որ յուսար։
Ըրած բարին ցըցնելլ լաւ բան մը չէ,
Ամըչնալն ալ բարի ըլլալ՝ լաւ բան չէ։

Նա որ բարի բան մը ընելու կ'ամըչնայ։
Նա չարեաց մէջ անվախ կ'իյնայ ու կ'ելլայ։



ԳԱՌՆՈՒԿ ԵՒ ԳԱՅԼ

Զուր կը իրմէր մի առուակէ գառնուկ մ'հեզ.
Գայլ մը եկաւ ըսաւ. « Զուրս ի՞նչ կ'աղտոտես,
Ըզքեղ պէտք է որ ես ուտեմ »։
Հըրեշտակի ձայնով մը ըսաւ գառնուկն հեզ.
« Ներէ, պարոն գայլ, մի ըլլար իմ գէմ չար,
Ես աւելի հեռուն կ'երթամ կը խըմեմ »։
« Ե՞ս չար, ուրեմն ես չար եմ քու կարծիքով։
Կը ներէի քեզի խըմել,
Բայց պէտք ես դուն, պէտք ես քաւել
Այս նախատինքը արիւնով։
Ճար չիկայ, պէտք է որ մեռնիս »։

« Ձէ տակաւին », լըսուեցաւ ձայն մ'հեռուէն,
Որսորդ մ'էր այն որ անցնելով նոյն տեղէն,
Եւ տեսնելով այն գայլ դաժան
Որ կը վազէր գառին վըրան,
Պարզեց հրացանն՝ անոր գըլուխը ծակեց,
Աղատեցաւ գառնուկն, հոգին նա փըչեց։
Գառնուկը ունին իրաւունք,
Միշտ անիրաւ են գայլունք։

ՄԵԾ Ը Լ Լ Ա Լ

Հայր մ'իր որդւոց ապադային վըրայ կը խօսէր.
« Ըսէք ինձի ինչ որ կ'ուզէք դուք օր մը ըլլալ։
Նայինք Պօղոս դու նախ »։ Պօղոս քաջ տըղայ մ'էր,
Եւ օդոյ մէջ իր փայտէ սուրբը շարժելով
« Հայր, ես զինուոր տիլլամ » ըսաւ բարձը ձայնով։
Սըկըրտիչն որ երկու աթոռ մէկաեղ տանէր,
Ծանըր դէմքով մ'ըսաւ տի պամ ես կառավար։
— Իսկ դո՞ւ Սարգիս »։ Եւ Սարգիսիկը վազելով
« Նոյն բանն է ինձ համար, միայն թէ մեծնամ, հայր »։
— Ապրիս, դու շան լաւ խօսեցար,
Ցուսամ մեծնաս պիտի, ըսաւ։
Երկու եղբարք կը խընդային, աւելցուց հայրն.
« Պէտք է որ դու զինուորս և դու քաջ կառավար,
Ապագային մէջ ինչ տեսակ բախտի հառնիք,
Ըլլաք մեծ ոչ հասակով
Այլ մեծ մըտքով ու սըրտով։





Տ Ղ Ա Ն Ե Ւ Ճ Ա Ն Ճ Ը

Մարկոս կը փեթթէր ճանճի մը թևեր,
Տեսաւ մայրն ու սաւ. « Ի՞նչ կ'ընես, ծօ՛ չար,
Կ'ուզէի՞ր որ մէկն այդպէս քեղ նեղէր.
— Չեմ նեղէր ես մայր. նա բան մը ըլզգար
Ամենեին ճիչ մը բերնէն չելլար:
— Արդ կը կարծես, չար, թէ լաւ բան կ'ընես:
Անցեալ օր ինչո՞ւ դուն չեիր ճըշար
Երբ անկողնիդ մէջ ջերմն ըզբեղ նեղէր»:
— Ճիչն իմին շըրթանց վըրայ կը մընար.
Զէի կըբնար ես ճըշալ, բայց լլոիկ
Կը համբերէի, էի շատ տըկար»:
— Տըկար, տես ուրեմն, այս ճանճը քեղմէ
է հազար անգամ աւելի տըկար,
Խեղճը կը կըրէ, ճըշալ չի կըրնար:
Բայց նայէ թէ ինչպէս կը բարախէ»:

ԹՇՈՒԱՐ ՄԱՐԴՈՒ ՄԸ ՇՆՈՐՀԱԿԱՎԼՈՒԹԻՒՆՔԸ

Խեղճ մարդ մաղեատ, աւաշլ, ինչպէս կան շատեր,
Թըշուառ, ծեր, որբ, անբարեկամ և անյարկ,
Որ հաղիւ մի քար ուներ իւր գըլխուն տակ,
Ամբողջ իր օր աղօթելով կ'անցընէր:
Վերէն վար զինքը չափելով մարդուն մէկ,
« Քու բերնէդ ի՞նչ հառաչանքներ
Պէտք են ելլել, ով գըմբալլ հէք,
Առ Աստուած՝ օր քեզ համար բնաւ բան չըներ »:
Պատասխանեց ծերն. « Իւր պարգեքն անթիւ են,
Աստուձմէ բան չեմ ուզեր զինքը կ'օր հներ:
Ամբողջ բնութեան գեղեցկութիւնը վայլեմ:
Կըրնայի կոյր ըլլալ, թըռչնոց երդ լըսեմ:
Ունիմ սոկի երազներ որ յիս կ'երգեն,
Որպէս զի բան մը չի մոռնամ,
Աստուած թուլու ինձ բարեկամ
իմին սիրուն
Աղուսոր շուն »:

Թէ մարդ օր հնէ զԱստուած անթիւ շնորհացն համար
Ստուերաց վըրայ գանդատելու ատեն չըլլար:

ԳԵՏԻՆ ԶԱՅՆ ՄԲ

Շիրմի մը մօտ կու լար մի մայր։
Լըսուեցաւ ձայն մ'յանկարծ գետնէն.
« Մի լար այնչափ, մի, բարի մայր,
Թէ ոչ նընջել որբոցիս մէջ չեմ կըրնար»։
Ժըպտեցաւ նա. « Ի՞նչ, կը տեսնեմ գետնէն զիս,
Որդեակ սիրուն, սուզ իմ սըրտիս։
— Ով մայր, ի մէջ իմ դադաղիս
Գու մի ժըպիտ
Հաղար վարդեր կը բաւացընէ գեղափըթիթ։

ԲԱՐԻՆ

Երեք աըղայք ի դասատուն կ'երթային։
« Եթէ արէկ աշխատիմ, հայրս՝ ըսաւ մէն՝
Ինձ մի սոկի խոստացաւ։
— Պիտ, աշխատիմ երկրորդն ըսաւ,
Որպէս զի զիս գըրէկ մայրն իմ»։
Գալով վերջնոյն՝ հառաչեց. « Մէկը չունիմ,
Ոչ հայր ոչ մայր, վասըն զի ես որբիկ մ'եմ.
Սակայն ես ալ 'տի ջանամ որ լաւ ընեմ։
Բարին պէտք է ընել՝ զի է ինք բարի։

......

ԶԱՐՄԱՅՈՒՄՆ

Փոքրիկն Անտոն լըսելով զայս պատմութիւն,
Գոչեց յուղուած ձայնով աչքերը լեցուն.
« ԱՇ, ի՞նչ բարի է այդ աըղան, ի՞նչ սիրուն.
Բարի ընել առանց վարձքի
Իրաւ վարձքի է արժանի.
Այս օրուընէ ես ալ առանց մէկ բանի
Պիտի սորվիմ
Գասերն իմ»։
« Ապրին, որդեակ, մայրն իւր գոչեց
Ու նընդութեամբ զինքը գըրկեց.
Պիտի նմանիս որդեակ իմ այս բարի աըղան
Զի սիրեցիր գեղեցկութիւնն անոր հոգւոյն»։


Մարդ երբ յուղուի, ըսել է մօտ բարւոյն,
Զարմացումէն ետքը կու գայ լաւութիւն։





Ա. Դ. Ա. Ի Ն Ի Ն

ի՞նչ կը տեսնեմ, իմ սիրուն աղաւնին,
ի՞նչ են այդ փետուրք որք կուրծքէդ թափին,
Գուշ զանոնք փեթթես, դու ծոցըդ պատռես,
Մեղք ես, մի ըներ, քեզ կը վընասես:
— Այս ցաւ ինձի բնաւ վընաս մը չի տար,
Եւ կ'ուղիս ըսեմ թէ ինչու համար:
Վասըն զի մայր եմ:
Այս փետրիկներով անկողին չինեմ,
Քաղցրիկ քընքուշ բոյն
իմ ձագուկներուն:
Մասձել ըսկըսաւ ինքնիրեն տըղան.
« Ես ալ մի մայրիկ ունիմ սիրական,
Որ ինձի կուտայ սըրտին ու հոգւոյն
Ամէն բաներ լաւագոյն »:



Ա. Ն Պ Ա Տ Ա Ճ Ա Խ Թ Ի Ի Ն Մ Ը

« Պօլոսիկ, կարծեմ թէ քուն կ'ըլլաս դուն,
Փընանալու տեղ չէ եկեղեցին,
Եկաւը երթանք տուն »:

— Մայրիկ, հինգ անգամ աղօթքը լըի,
Կը վախեմ գուցէ Աստուած ձանձրանայ:
Զեմ զիտեր իրեն հաճոյ կ'անցնի՞ մի
Մէկ առակ իրեն զըրուցել հիմայ:

— Զէ, որդեակ, ըսաւ մայրը ժըպտելով,
Այդ բոլորովին է անպատշաճ բան,
Կըրնանք մենք զիմել առ Աստուած միայն
Աշօթքով և աչ թէ ուրիշ բանով:

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

« Ի՞նչպէս Աստուած կըրնայ ամէն տեղ ըլլալ,
Կ'ըսէր Պօլոս, զի չենք կարող զինք տեսնալ:
— Ես, լաւ զիտեմ ըսաւ օննիկ, է այնպէս
Ինչպէս եթէ մի գաւաթիկ ջուր առնես
Ու մէջը մի կըսոր շաքար հալեցնես »:

Փոքրիկ տըղու մ'համար կարծեմ թէ գէշ չէ:
Հազիւ թէ տալ կարող է
Իմաստուն մ'իսկ ասոր նըման
Մի պատասխան:



ବୁଦ୍ଧିକାରୀ

Մի երթար ի բակ, կը լըսես Գըհգու-
— Բայց, Հայր, չանձրեկը:

— Թա՛լ ըԱմյ, կԵցի՛ր:

— Фајџ Џунзул:

— Un...
— Un...

$\beta_{\omega Jg}, \zeta_{\omega Jp} \dots$

— Գնա՞ , կորսուէ :

Հաւ մը սառեր էր գետինն ու քարեր:

Հազիւթեան մէջ Գրիգոր մի քայլ էր ըստեր.

Սահեցաւ ինկաւ ու լարով դարձաւ:

Թէ բան մ'արգիլէ հայրդ, հըաման կամ տալ,

Բարւոյդ համար է՝ հնագանդէ արդալ,

Առանց հարցնելու թէ ինչու համար...

— Քեզի Համար :

У б о У п л а

ԱԵԺ մայր, ինչու համար մազերդ են ճերմակ:

— Տարիներուն ձիւնն է, ձրմեռն է սրդեակ:

— ԱԵԺ մայր՝ ուսակի՞ց են ճակատին խռովածիկ:

— Վիշտը փորեց բալոր ալու չըս ակօսներ։

$\Psi^{k\delta} f_{\mu\nu\rho\lambda} \text{ and } k_{\mu\nu} k_{\rho\lambda}$ are the same terms.

— Հայ մը սը թաւ լեռներու եւ ժամանակու համապատակ է:

— ինչու աչքին չպահ կամ սկզբու է մեջ ժամանակ

— կ թափելէն դառն առօսն ընկա անհամար:

— ինչո՞ւ ծըռած քակես ճակատդ ի գետին:
— Զի լաւ տեսնեմ հողն ուր ոսկերքս պիտ' հանդէին:

— Ալբելի մայր, շըրթունքներդ ի՞նչ մըրմընջեն
Միշտ նուն իսկ երբ զգեցկ գըրգեմ: — Կ'աղօթեն:







3569

8362000

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0007948

